# ՔՆԱՐ

## ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԵՐԳԱՐԱՆ

Ժողովեց և ձայնագրեց
Ս. Դէմուրեան:

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.
ԿՊՈՒՐՃՈՒՆՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ. ԼԵՇՏՈՒԿՈՎ. 4
1907.

# ՔՆԱՐ

## ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ԵՐԳԱՐԱՆ

(ԵՒՐՈՊԱԿԱՆ ՆՕՏԱՆԵՐՈՎ)

---

*Ժողովեց և ձայնագրեց Ս. Դէմուրեան*

*Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ*

«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ», ԼԵՇՏՈՒԿՈՎ. 4

1907

Печать П. И. Волковъ. Спб. Садовая 22.

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Վաղուց է, որ հայ ժողովրդական երգը քաղաքացիական իրաւունք է ձեռք բերել հասարակութեան ամեն տեսակ շրջաններում։ Շատ ժամանակ չէ նոյնպէս, ինչ տարածուել է մեր մէջ եւրոպական ձայնագրութիւնը։ Բայց մինչև այժմ լոյս չտեսաւ ոչ մի երգարան եւրոպական ձայնանիշներով (նոտաներով), որպէսզի հասարակութիւնը կարողանար 'ի մօտոյ ծանօթանալ հայ, մանաւանդ հայ ժողովրդական երգերի գողարիկ եղանակների հետ։ Երկար սպասելուց յետոյ, ես, ինձ վրայ վերցրի այդ ծանր և պատասխանատու գործը։

Լոյս ընծայելով սոյն երգարանը, նպատակս եղել է ընդհանրացնել եւրոպական նոտաներով հայ ժողովրդական երգը հասարակութեան լայն խաւերում։

Երկար կանգ չեմ առնիլ յիշեալ երգերի ծագման և անցեալի մասին։

Այդ երգերը, իբրև ծնունդ հայ ժողովրդի դարևոր վշտի ու թախծի, կրում են իրենց վրայ դարդի ու լացի, ողբի ու կսկծի կնիք։ Ժողովրդական երգը մի հոգեկան ողբարան է, որի աղբիւրն է՝ հայի դարաւոր տառապանքն ու տանջանքը։ Այդ երգերը պէտք է երգել մեղմ, թեթև շեշտերով և ոլորուն խաղերով ու կամաւոր չափերով։

Թող ներուի ինձ, եթէ մի քանի երգերի անյաջող բնագրի տեղ, ընտրել եմ աւելի յարմարաւոր և բովանդակալից բանաստեղծութիւններ։

Երգարանս կազմելիս, տասը երգ վերցրել եմ իմ նախկին ուսուցիչ Եղնիկ Քահանայ Երզնկեանի «Ձայնագրեալ ազգային երգարան»-ից և փոխադրել եմ եւրոպական նոտաների՝ շատ չնչին փոփոխութիւններով, երկու երգ՝ իմ ընկեր Գրիգ.ր Միրզայեանի «Քառաձայն երգեր»-ի տետրից և երեքը՝ պ. Հ. Բօյաճեանի «Հայ ժողովրդական երգեր»-ի տետրից։

Անկասկած, երգարանս, որպէս առաջին փորձ, կունենայ նաև իւր թերութիւնները, որի համար նախօրօք ներողութիւն եմ խնդրում։

Ս. Դէմուրեան

## ԱՂՕԹՔ

**Andante.** (con lenezza).




## ԱԽՊԷՐ ՋԱՆ

**Allegro.** (con agilita).




2. Առիւծի պէս կայներ ես,
Պեխերդ ոլորեր ես,
Պեխերդ ոլորեր ես,
Առիւծի պէս կայներ ես։
Ախպէր և այլն...

3. Մէջքդ կապեր ես խանչալ,
Դաստէն նաշխած է խալ-խալ,
Դաստէն նաշխած է խալ-խալ,
Մէջքդ կապեր ես խանչալ։
Ախպէր և այլն...

4. Ձեռքդ թուանգ ես առեր,
Դուշմանի դէմ ես կայներ,
Դուշմանի դէմ ես կայներ,
Ձեռքդ թուանգ ես առեր։
Ախպէր և այլն...

## ԵՂՍՕ ՋԱՆ




2. Հէ, հէ, հէ, հօ, հօ, հօ, Եղսօ ջան.
Աչքերդ թուխ, ունքդ կամար,
Դու ծնուել ես ինձի համար։ Մալի ա...

3. Հէ, հէ, հէ, հօ, հօ, հօ, Եղսօ ջան.
Գլխիդ գցել ես ալ չարղաթ,
Ալւան շորերդ է ղաթէ-ղաթ։

4. Հէ, հէ, հէ, հօ, հօ, հօ, Եղսօ ջան.
Ձեր տունը կամար-կամար է,
Նախշուն յօղէն ինձ համար է։

5. Հէ, հէ, հէ, հօ, հօ, հօ, Եղսօ ջան.
Քեզ պէս ջահիլ չիւան աղէն
Սաղ աշխարհքին բաբարար է։

## ԴԱՐԴՍ ԼԱՑԷՔ




2. Երկինք, գետինք գլխուս մթնան,
Անտուն-անտէր կուլամ ես.
Եարիս տարան, ջանիս տարան,
Հոնգուր-հոնգուր կուլամ ես...

3. Ախ, եարս ինձի հանեց սրտէն,
Անճար թողեց ու գնաց,
Սրտիս սուղէն — խորունկ եարէն
Անդեղ թողեց ու գնաց...

## ԽՆԿԻ ԾԱՌ

Allegro con agitato.




2. Մարալ, մարալ, մօտ արի, դիւլում ջան,
Ջէյրան, ջէյրան, տուն արի, դիւլում ջան։

3. Ամպել ա, շուտ տուն արի,
Մթնել ա, շուտ տուն արի։

4. Կովի հորթը կապեցի,
Նստայ տակը կթեցի։

5. Կաթն ու կարագը մերված,
Եարիս փեշքաշ ղրկեցի։

## ԾՈՂԵՐ ՋԱՆ

Allegro con agitato.




2. Նախրատափին խնկի ծառ,
Խնձոր ցցեմ արի տար։ Դուն ...

3. Ուրբաթ, շաբաթ քեզ մօհլաթ,
Լոյս կիրակի, եկ ինձ տար։ Դուն ...

4. Ինձի համար լուսնեակ ես,
Եաղութից անգին ակ ես։ Դուն ...

5. Կապել ես քիրման գօտին,
Մարդ չես թողնում մօտիկ։ Դուն ...

6. Համ տեսքով ես, համ հոտով,
Քան բզծաղիկ խօրօտիկ։ Դուն ...

## ՋԱՆ-ԻՄԱՆ




2. Դու չուստ կիգաս, դու Խլաթա,
Բոլոր երես՝ լմանի գաթա,
Պագիկ մի տուր տամ զոլաթա,
Կանչիմ եար արի՛, շուտ արի։

3. Դու չուստ կիդաս, դու Խաս գեղու,
Դու կու քելիս ինչ օր մեղու,
Պագիկ մի տուր տանիմ գեղու,
Կանչիմ եար արի՛, շուտ արի։

4. Արի երթանք Կոնկու սար,
Բերդ մի շինինք մտնանք խսար.
Խարուր կուզին կիտամ խազար,
Թուխ աչքերուդ խաթրու խամար։

## ԱՐՄԻԿԻ ԵՐԳԸ




2. Բարձր սարէն պաղ ջուր կուգայ,
Արմիկի երես կը լուայ.
Ա՛յ երես, արև երես,
Քո շափաղով մեր սիրտ կերես։

3. Աղջկե՛րք, պար բռնեցէք,
Արմիկի աչեր գովեցէք.
Ա՛յ աչեր, սիրուն աչեր,
Արևի պէս փայլուն աչեր։

4. Ո՞վ պատռեց վարդի բերան,
Արմիկ պատռեց վարդի բերան,
Վարդի բերան—անա այսքան.
Ժանիքները մէկ-մէկ դերան։

## ԱՆԲԱԺԻՆՆԵՐ




2. Հարուստ մարդիկ կուտեն, կ'խմեն
Աշխարհի նոխ սեղանից,
Մենք աշխարհի խորթ-տղերքն ենք,
Մեզ փայ չկայ աշխարհից։

3. Խեղճ աղքատի հողին դուրս գայ,
Բարից-հողից հաց քամէ.—
Բեռով հացը հարուստին տայ,
Հարուստն ուտէ, փայլէ...

4. Խեղճ աղքատը դառը դատի—
Դատարկ նստի... Էյ, աշխարհ,
Էլ ինչու ես քարը թողնում
Քարի վրայ, քա՛ր-աշխարհ...

## ԱԼ ՄԻՆԹԱՆԵԴ




2. Դու կայնել ես սարի ծոթին,
Ու ես դրել կանանչ խոտին,
Ես մեռնիմ քու անուշ հոտին. Եար
և այլն։

3. Ջէյրանի պէս շորոր տալով,
Իմ չորս բոլորս ման գալով,
Վիզս ծուռ թողիր լալով։ Եար
և այլն։

## ԾԱՄԲԱՑ ՏԻԷՔ

Allegro Moderato.




2. Սարերը սնձոտել ա,
Ծամբայ տւէք թող տուն գայ,
Ուլխարը բրդոտել ա,
Ծամբայ տւէք թող տուն գայ։

3. Տաւարը նստոտել ա,
Կանաչը պառկոտել ա։

4. Հօտաղ քու մէրը մեռնի,
Նորերդ կեղտոտել ա։

## ՋԱՆ ԳԻՒԼՈՒՄ

Allegro Moderato.




2. Սիրել եմ սէրն երեսին,
Ռէհանի թերն երեսին.
Ով իմ սիրածն ինձ չտայ,
Աստծու կրակն երեսին։

3. Արեւը կամար-կամար,
Կապել ես ոսկէ քամար.
Ցիսուն օր պաս եմ պահել
Իմ ադբօր ճամբի համար։

4. Խնձոր ունիմ կծած ա,
Զորս կողմն արծաթած ա,
Աղբէրս ուզեց տուի ոչ,
Ասի եարիս ղրկածն ա։

5. Սարէն կըգայ ձիաւոր,
Մեր տունը չարդախաւոր.
Հրէս եկաւ իմ աղբէրն,
Երեք օրւան թագաւոր։

## ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳ




2. Բաղդ կայ երկար, բաղդ կայ խիստ կարճ,
Բաղդ կայ տխուր, բաղդ կայ զուարճ,
Բաղդ կայ զարնանային կանաչ,
Իմս լեռ քար է, ի՞նչ անեմ։

3. Բաղդ կայ լուսին, արեգակ է,
Բաղդ կայ լուսաւոր ճրագ է,
Բաղդ կայ անշէջ վառ կրակ է,
Իմս խաւար է, ի՞նչ անեմ։

4. Վիճակս գրուած էր Թղթին,
Մահուրի Գէորգն իմ ճակտին,
Աստծոյ կամեցած բաղդին.
Անձս յօժար է, ի՞նչ անեմ։

## ՋԱՆ ՄԱՐԱԼ




Չէն կուտամ, ձէն չի հաներ,
Մազեամ ինձմէն ճորեր ա։

2. Ջան, մարալ ջան,
Ալագեազ բանձր սար ա,
Ջուրը հիւանդի ճար ա,
Սիրած սիրածին չեն տայ,
Էս ի՞նչ խարաբ աշխարհ ա։

3. Ջան, մարալ ջան,
Ձուն գնեմ Թաւէն խաշեմ,
Եղնեմ երդիկը աշեմ,
Տեսնեմ եարս գալի՞ս ա,
Ձորեմ չարքմէքը քաշեմ։

## ԳԻՇԵՐԸ ՎԱՆՈՒՄ




2. Նա նայում էր լուռ, մնջիկ,
Իբրև մի կոյս դէպի Վան,
Նրա աչքին երևում էր | կրկն.
Բիւր դարերի տեսարան։

3. Նա տեսնում էր անթիւ քրդեր
Առած սուր, թուր, հրացան,
Կոտորում են, կողոպտում են, | կրկն.
Աւերում են անտէր Վան։

4. Եւ կարծես թէ երկնքից
Ասում էր այդ լուռ վկան,
Վրայ հասիր հայ ազգասէր, | կրկն.
Ձեռքից գնաց Հայաստան

## ԿԱՊՈՒՏԱԿ ՋԻՆ




2. Ուռի ես կռանալ մի, մեր դռնէն հեռանալ մի,
Եար, թէ Աստուած կսիրես, սիրել ես մոռանալ մի։

3. Փաշխս ծիրանի կօթ ա, սիրտս եարալու խոց ա,
Սիրտս սրտումդ ընէր՝ իմանաս դարդըս ինչ ա։

4. Ընկել եմ, ախ, սարէ-սար, դարման չունիմ, ոչ մի ճար,
Ուզում եմ գամ քո մօտ, առաջս ծով, սար է, սար։

5. Իմ սրտիս դաղ մի անի, ջիգեարիս աղ մի անի.
Ձեր դրանը, այ աղջիկ, ինձ սուլթ-սաղ մի՛ անի։

## ԾԱՂԿՈՑ ՄՏԱՑ

**Andante con calore.**




2. Ազիզ եարիս ձէն տուեցի, ձէն չկար,
Ծաղկանց միջին, անուշ վարդս էլ չկար։

3. Անգութ եարս, սրտիս հետ խաղ արեց,
Թողեց, գնաց, իմ չիղեարը պաղ արեց։

4. Երգիչ դարձայ, պտտեցի սար ու քար,
Ձէն տուեցի, անուշ վարդս էլ չկար։

5. Աստուած սիրէք, ասէ՛ք, եարս ո՞ւր գնաց.
Ազիզ եարս, անուշ վարդս ո՞ւր մնաց։

## ՔՐԴՈՒՀՈՒ ԵՐԳԸ

**Ad libitum.**




2. Արիւնոտ էր, կարմիր ներկուած բալա ջան,
Արտասուքով եւ լըւացի օր օր օր բալա ջան։

3. Դէ՜հ, մեծացիր, շուտ բոյ քաշիր բալա ջան.
Զարի արիւն խմել սովրիր բալա ջան։

# ՍԱՐԷՆ ԿՈՒԳԱՑ




2. Հըրէս էկաւ իմ աղբէր, վա՜յ լէ, լէ լէ, լէ,
Երեք օրւայ թապաւոր.
Բռնեց ինձ, դրկեց ինձ,
Համբուրեց եարս ինձ։

3. Կօղբայ քարերն մաղած է, վա՜յ լէ...
Իմ եարն ինձի բաղած է.
Ինչիլիկ և այլն...

4. Ելէք, տեսէք եարս էկաւ,
Մարալ եղը մատաղ է.
Բռնեց ինձ և այլն։

5. Բարձր բօյդ տալ չունի, վա՜յ լէ...
Լօյս երեսդ խալ չունի.
Ինչիլիկ և այլն։

6. Ջանիկ եարի մօտ կացի, վա՜յ լէ...
Որ տխրել, ու. լալ չունի.
Բռնեց ինձ և այլն։

# ՇԷԽ ՍԱՖՕ




2. Իմ եարն անուշ ծնծղուկ է,
Եարա սրտիս դեղուկ է,
Մենծ պեխի սուր խանչալից՝
Ձիմ սիրտ ծիղուկ-ճեղուկ է։
Տարան, տարան . . .

3. Անուն Վառօ էր եարիս,
Խող քաշեցի զիմ խալիս.
Էն մենծ պեխի կեռ թուրը,
Կտրեց թելեր զիմ սրտիս։
Տարան, տարան . . .

# ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳ




2. Քաշի՛ր, եզր, ուժիդ մատաղ,
Քաշիր, քաշենք, վար անենք,
Ծիպտին արա, քշիր հօտաղ,
Մեր սև օրին ճար անենք:

3. Պարտքատէրը պանդատ գնաց,
Քեօխուէն կըգայ, կըծեծի.
Տէրտէրն օրհնեց, անվարձ մնաց,
Կը բարկանայ, կ՚անիծի:

4. Էն օրն էկան, Թօվչի արին,
Հարկ են ուզում տէրութեան.
Ինչ տամ կօռին ու բէգառին,
Վարի՛, վարի՛, իմ գութան:

5. Ձեռըս պակաս, ոյժս հատած,
Հազար ու մի ցաւի տէր,
Ինձ են նայում, մերկ ու սոված,
Մի տուն լիքը մանուկներ:

## ԷՍ ԾԱՄԲԷՔԸ




2. Մոլորիս մէկ ճար արա, վայ լէ...
Ինձ էլ քեզ ընկեր արա։ Նա, նայ...

3. Թառե՛ր դուք ծիրան մի՛ք տալ, վայ լէ...
Ճղներ, դուք էլ բար մի՛ք տալ Նա...

4. Ես ղարիբ եմ, ղոնաղ եմ, վայ լէ...
Դարդերս իրար մի՛ք տալ։ Նա...

5. Սև փուշին վիզս եմ քցել, վայ լէ...
Կըրակը սիրտս եմ լցել, Նա...

6. Թամամ հինգ օր չեմ տեսել, վայ լէ...
Իմ եարը միտս եմ քցել։ Նա...

## ՎԱՅ ԼԷ, ԼԷ




2. Կանգնել ես ախա-բախա,
Լաչաքիդ տուտը կախ ա,
Սև աղայ, սիպտակ աղջիկ,
Բռնել էք իրար եախա։

3. Օրեր կամար-կամար,
Կապել ես ոսկի քամար,
Ցխուն օր պաս եմ պահել,
Իմ աղբօր ճամբի համար։

4. Լուսնակ, դու անցի, գնա,
Կանգ առ ու էնպէս գնա.
Ոչ տեղ որ եարիս տեսնես,
Բարև տուր, անցի, գնա։

## ՆԱՐ ՋԱՆ




2. Երևան բաղ եմ արել,
Ջիգեարս դաղ եմ արել,
Դոստ ու դուշմանի միջին,
Լացս ծիծաղ եմ արել։
Եար ջան և այլն։

3. Ակը դէմ առաւ քարին,
Եկաւ, բոլորաւ տարին,
Խօսքերդ թէ՞ չը յետ առար,
Զրկացար քո իղրարին։
Եար ջան և այլն։

## ՔՈՅՐԵՐԻՍ ՄԷՋ




2. Իմ տարիքը անցնում են շուտ,
Գլորւում են հանապազ,
Ա՜խ, իմ յոյսս, իմ փափագս } Կրկն.
Համարւում են միշտ երազ։

3. Ուրտեղ լսեմ ձայնը շարժուն,
Կվազեմ այնտեղ վռազ,
Սպասում եմ այցելութեան } Կրկն.
Ոչ մի տեղից լուր չկայ։

4. Չէ՞, քո խղճալի հարսն եմ,
Խղճա՛ ինձի, քաջ հիւսիս,
Քեզ եմ տուել իմ Ախուրեան, } Կրկն.
Իմ անտառիկ մեծն Մասիս։

# ՀԱԲՐԲԱՆ

Allegro.




2. Ապուր եմ եփել աղի,
Ուտողի սիրտը դաղի,
Ես ու դուն իրար սիրենք,
Թող դուշմանը կատաղի։

3. Ո՞նց տնկի ես, բար չունիս,
Ո՞նց ջահել ես, եար չունիս,
Երկնքի դուշ ես դառել,
Իջնելու ումուդ չունիս։

# ՕԼԱՆ ԳԵԱՒՈՒՐ



2. Օլան գեաւուր տողրի սոյլա.
Պանքա գիրէն սէ՞ն մի սըն.
Խէ՛յր, էֆէնդըմ աֆ էդարսըն
Առաջ գնացողը ես էի,
Երդըւած եմ չեմ ասի։

3. Օլան գեաւուր տողրի սոյլա.
Արխադաշն վա՞ր մի դըր.
Խէ՛յր, էֆէնդըմ աֆ էդարսըն
Հինգ հարիւր հոգի ենք,
Երդըւած եմ չեմ ասի։

4. Օլան գեաւուր տողրի սոյլա.
Սիլահլարն վա՞ր մի դըր.
Խէ՛յր, էֆէնդըմ աֆ էդարսըն
Պատիցը կախւած է,
Երդըւած եմ չեմ ասի։

## ԽԱՆՈՒՄ ՆԻԱ ՋԱՆ

Moderato.




2. Ոչխարն էս դին կարծայ, էն դին
գառներր,
Կանչեցեր ա ծաղիկներր ծառներր։
3. Արի էրթանք քու ման գալած
արտերր,
Քեզի տեսայ թաժացաւ իմ դարդերր։
4. Ձեռս ու ոտս կապին՝ բերդր դրեցին,
Զուխայ, շալվար լալով տունը բերեցին։
5. Ես Ադէկն եմ—Ջամալեցի մէկ չիւան,
Տուժտաղ եղայ բատուց չուրի Երևան։

## ԱԲԱՐԱՆԸ ՔԱՐՈՏ Ա.




2. Թամամ օխտը տարի ա,
Վայ լէ, լէ, լէ, ջան լօ, լօ, լօ,
Գիրն ախպօրը կարօտ ա,
Իմ մայրիկ ջան, իմ քոյրիկ ջան. {կրկ.

3. Բերդի բոլորն աւազ ա, վայ լէ…
Նշխուն գիւլլէն Թուաղա. իմ մայրիկ…

4. Կալատափը մաղել եմ, վայ լէ…
Կողակ ձուկը աղել եմ, իմ մայրիկ…

5. Հազար ու մի դարդ ու ցաւ, վայ լէ…
Սրտիս միջին Թաղել եմ։ Իմ մայրիկ…

6. Սև ամպը սարի գլխին, վայ լէ…
Կաքաւը քարի գլխին։ Իմ մայրիկ…

7 Մէկ մէկու խօսք ենք տուել, վայ լէ…
Էն բանձր սարի գլխին։ Իմ մայրիկ…

## ԼՈՒՍՆԱԿԸ ՑՈԼԱՑ




2. Ձեր բաղի դուռը բաց ա, վայ լէ...
Ոտներդ շաղով թաց ա. ով էր...
Եարիցդ հեռացել ես, վայ լէ...
Աչքերդ լիքը լաց ա։ Ով էր...

3. Սրտս ցորեն ցանեցի, վայ լէ...
Դարդս հետը թաղեցի. ով էր...
Նապար ու մի աղօթքներ, վայ լէ...
Ցանած վախտը շարեցի։ Ով էր...

4. Վարդ գցի ձեռով բռնեմ, վայ լէ...
Եարալու սրտիդ մեռնեմ. ով էր...
Քեօլկլցը մի դուրս արի, վայ լէ...
Բալքի հաւասրս առնեմ։ Ով էր...

## ԱՄՕԹ, ՀԱԶԱՐ ԱՄՕԹ




2. Միամիտ նստած ի քոյրիկիս բաղին,
Անօրէն լամուկն էլաւ իմ եաշին։
Ամօթ հազար...

3. Սրբուհու ունքերն ամենից կամար,
Աստուած ստեղծեր էր ինձի համար.
Ամօթ հազար...

4. Սրբուհու արցունքն բարեխօս էլաւ,
Գիւլլէն ուրին Յակօբ ախպօրը չըրղիպաւ։
Ամօթ հազար...

5. Ես սրբուհին եմ Ղուրղուղուլեցի,
Երեք տարի Ղարա-Ղօյլին մնացի։
Ամօթ հազար...

6. Ախպէրտանքս իմ հաւարին չէկան,
Ղզլբաշի տէրութիւնը գնացի։
Ամօթ հազար...

## ԵՐԳ ՎԱՆԻ ԼԵԶՒՈՎ

**Allegro - Moderato.**




2\. Ընդայ ծոցուն ծով յափան,
Մորեցի ծոր լթփեցի,
Մանրիկ, մանրիկ խորմեցի.
Ոէնան ճիւղով կապեցի,
Հա մէկ եարոջ ճամբեցի։
Հանէր նանա, նանա,
Ջանէր նանա, նանա։

3\. Թարգէր եւ երկու ջուխտ ժամ,
Ջուխտ ժամեր մէջն էր նշան,
Եղայ թէ պատնեմ նշան,
Գլորայ, ընդայ գնդան։
Հրմլայ գնդան ո՞վ է տեսի,
Մէջ վարգ է, բոլոր ռէհան։

4\. Տարին տսերկու ամիս,
Թռնմու խնձորն 'ի գօտիս.
Խնձորի կէս խածուկ էր,
Զորս բոլոր արծթուկ էր,
Ճամբենք եարոջ, գէ՛, արի։

# ԱՐԱԶ




2. Ա՜յ, իմ Արա՛զ, ջուրդ վարար,
Սիրուն եարիս եարաբ տեսա՞ր,
Ես չը հասայ իմ մուրազին,
Երա՛զ, եարաբ կարօտս առա՞ր։

3. Ամպերն ընկան Մասիս սարին,
Կարօտ՝ մնացի ես իմ եարին.
Աստուած սիրես, էրուած սրտիս,
Ջուղաբ բերես էկող տարին։

4. Գիշերն անքուն դիր կը գրեմ,
Արտասուքս գետ կը շինեմ,
Արա՛զ, ծէքը ջրիդ չառած՝
Իմ սև դարդը քեզ կը բերեմ։

5. Կասեն շողքը քարին ընկաւ,
Կրակն իմ սրտիս մէջն ընկաւ,
Կամար ունքից, թուխ աչքերից,
Ցաւն իմ չիւան ջանիս ընկաւ։

## ՀԱԲՐԲԱՆ




2. Հաբրբան, ջան է ջան։
Արև դիպաւ սարերուն,
Կաքաւ թռաւ քարերուն,
Եղսօն կայնեն վրր դարուն։

3. Հաբրբան, ջան է ջան։
Ձունն էկաւ, Նստաւ կալին,
Թրման չունիմ ձրր մալին,
Կարօտ եմ չերսիդ խալին։

4. Հաբրբան, ջան է ջան։
Ջուր կիգայ դօչգօչալէն,
Հէ՛չ չըս հարցու իմ հալէն,
Գլուխդ իս դցի փալէն։

## 308 ՆԱԶԱՆՄ




2. Արագը հեշտացել ա,
Հոյ Նազանմ, Նազանմ,
Ճամբէքը կօշտացել ա,
Գիւլ Նազանմ Նազանմ. Եար ջան...

3. Խաբար արէք իմ նանին,
Հոյ Նազանմ, Նազանմ,
Դարդերս շատացել ա,
Գիւլ Նազանմ, Նազանմ. Եար ջան...

4. Խալիչէքը փռել եմ,
Նախշուն բարձեր դրել եմ.
Աղիզ ջան բեզ, ուտելու
Սեր, կարագ հազրել եմ,

5. Ծաղիկ եմ քաղել դեղին ա,
Իմ եարը ձեր գեղին ա,
Հիլ ու մեխակ շատ ունեմ,
Հրրէ եարիս ձեռին ա։

6. Ծաղիկ եմ քաղել ալ ա,
Ալայ չի, ալ փալայ ա.
Եար բունելը յուս բան ա,
Բաց Թողալը բալայ ա։

## ԼԱՑ ՄԷՐԻԿ ՋԱՆ

**Moderato.** (con dolore).




3. Անգութ կեանքում վէրք ստացայ,
Սրտանց սիրած ընկերէս,
Անգութ կեանքում վէրք ստացայ,
Անուշ սիրած քոյրիկէս.
Լա՛ց մէրիկ ջան, որ էլ չեմ գայ,
Ազիզ բալէդ էլ չկայ։

2. Կաթիլ, կաթիլ ամպն է ցօղում,
Սև ու պղտոր երկնքէն,
Մաղիկ, մաղիկ վէրքս է ծորում,
Իմ, անզիւման սև սրտէն.
Լաց մէրիկ ջան, որ էլ չեմ գայ,
Վէրքս խորն է, ճար չկայ։

## ՍՈԽԱԿ ԻՆՉՈ՞Ւ ՀԵՌԱՑԱՐ




2. Պարտիզիս դուռը երբ բացի, այաւա՜ղ...
Չքեղ թռած տեսայ լացի, այաւա՜ղ...
Տեսայ կարօտով մնացի, շուտ եկ...

3. Հանդլաւէկլիս եթէ սիրես, այ աւա՜ղ...
Որտեղ լինեմ ձայնս լսես, այ աւա՜ղ...
Եկ աղաչեմ երեսս տես, շուտ եկ...

## ՎԱՐԴ ԿՕՇԻԿՍ




2. Ձեր տան մէջը քնել չեմ ես,
Կարմիր խնձոր ծախել չեմ ես,
Վարդ կօշիկդ գտել չեմ ես,
Իմ մօտս չէ վարդ կօշիկդ։ Վարդ…

3. Լաւ օրս էղաւ մո՜խ ու փո՜խ,
Կորցուցի կօշիկս աւաղ,
Հայի տղա՛յ, հոգուդ մատաղ,
Տղայ, դրկէ՛ վարդ կօշիկս։ Վարդ…

4. Որ մօտս չէ ուրդի՞ց ճարեմ,
Այնիւ աղջիկ հոգիդ սիրեմ,
Իմ մօտս չէ, վարդ կօշիկդ,
Վարդից դեղեցիկ մաշիկդ։ Վարդ…

5. Ես մի անթառամ ծաղիկ եմ,
Անուշ երգող աղունիկ եմ,
Պատկերովս գեղեցիկ եմ,
Տղայ, դրկէ՛ վարդ կօշիկս։ Վարդ…

6. Ես գիտեմ, դու անգրանիկ ես,
Սիրովդ ինձի մօտիկ ես,
Իսկ հասակովդ էլ փոքրիկ ես,
Իմ մօտս չէ՛ վարդ կօշիկդ։ Վարդ…

7. Մի մնար ինձի պարտական,
Աղջիկ եմ տաս-չորս տարեկան,
Ես կը լինեմ քեզ սիրական,
Տղա՛յ, դրկէ՛ վարդ կօշիկս։ Վարդ…

8. Ինչո՞ւ մնամ քեզ պարտական,
Կամիս տամ հազար դահեկան,
Եթէ կլինիս ինձ սիրական,
Ես կ՚ճարեմ վարդ կօշիկդ։ Վարդ։

## ՀԱՅ ԱՊՐԻՆՔ




2. Հայ ապրինք, մեր հայրն է, այն
գիւղացուն,
Որ ազատութիւն սորվեցուց մարդուն։
Ու մեզ վեհ անուն մը տուաւ բաժին,
Եղբարք, հայ ապրինք, եղբարք,
հայ մեռնինք։

## ԱՐԱԶԸ ՀԵԾՏԱՑԵԼ Ա




2. Ծաղիկ ես բաղի միջին, եաման եար,
Մի հատ ես Թաղի միջին, եար, եար։
3. Գիշեր, ցերեկ առանց քուն, եաման եար,
Գովում եմ խաղի միջին, եար, եար։
4. Անցնում եմ գետի էն կուար,
Քաղեմ մի դաստայ նուար։
5. Ով իմ սիրածն ինձ չի՛ տայ,
Կը քաշեմ խանի դուար։

## ՋՈՅԳ-ՋՈՅԳ ԿՌՈՒՆԿ (Նուէր Հրայրին)

**Moderato.** (con lenezza).




2. Համ զիւլ, համ վարդ, համ Նարգիզ,
Պապօ, մամօ, կարդէք զիս։
3. Ալխպուլխար քնամ ես,
Էս՛ ի՞նչ ղաղու քաւյ է։
4. Էդման մեռել Թորկեն վիզ,
Պապօ, մամօ կարդէք զիս։

## ԷԿԱՒ ԳԵԱՐՈՒՆ

**Andante.** (Ad libitum).




2. Էկաւ գեարուն, կթինք օխչըրի կաթը,
Ա՜խ, Նազլու ջան, էս ինչ սև էր քեօ
բախտը։ (Կրկն.)
3. Արին Թափաւ մահուդ չուխիս Թե-
ւերուն,
Ա՜խ, սիրուն ջան, մնացեր ես էլե-
րուն։ (Կրկն.
4. Վո՜ւյ, վո՜ւյ, վո՜ւյ, վո՜ւյ, վո՜ւյ, շատա-
ցեր են եարէքս,
Ա՜խ, Նազլու ջան, մնացեր են բա-
լէքս։ (Կրկն.)

## ՄԱՃԿԱԼ




2. Կալթի սերը քաշեր եմ,
   Դրեր եմ հոլին՝ սառի.
   Ալ-գողնոցս փռեր եմ.
   Արի՛, թառլա՛ն, թռ՛ռ արի։
3. Տեղ եմ քցել շուաքում,
   Քամին կուգայ զով կանի.
   Լուսնի շողքն է մեր ծոցում,
   Զափ տուր, չափ առ—չուստ արի:
4. Դատարած, բեզարած եմ ջան,
   Ամպերն ելան—պէհ, արի,
   Բեզարած ջանից ղուրբան,
   Ծոփց թև առ, թէ՛զ արի:

# ԱՂԲԻՒՐ




2. Աղբիւր գիտե՞ս, թուրքը մեզ ինչ
է անում,
Մեզ ճնշում է, կողոպտում է,
բռնանում։ (Կրկն.)

3. Կար ժամանակ, որ մենք այսպէս
խեղճ չէինք,
Մեզ պաշտպանող թագաւորներ ու-
նէինք։ (Կրկն.)

4. Թող ու զէնքից, ազատ կեանքից զրր-
կուեցանք,
Քիւրդ ու թուրքի խարջը տալով՝ տան-
ջուեցանք։ (Կրկն.)

5. Այս անգութին պէտք էր տւած, ոչ
ցուրտ ջուր,
Այլ՝ տաք գնդակ կամ եռացած մի
շամփուր։ (Կրկն.)

6. Բայց ձեռք չը կայ, որ հուր, երկաթ
գործ դնէ,
Եւ մեր ազգը այս տանջանքից ա-
զատէ։ (Կրկն.)

7. Այժմ պարգիր, թուրքի տղին ջուր
տանեմ,
Պարգիր, պարգիր, քրդի տղին ջուր
տանեմ։ (Կրկն.)

## Ա՜Յ ՄԱՐԱԼ ԱՂՋԻԿ

**Moderato.**




2. Երբ երթանք քու ման գալած
արտերը,
Քեզի տեսայ՝ թամամցաւ իմ
դարդերը:

## ՀԱԲՐԲԱՆ

**Moderato.**




2. Արեւը բոլորել ա,
Լուսնեակը նորել ա,
Սիրունի խաթեր համար՝
Քունըս աչքիցս կորել ա:

3. Հէնքերը հինած տեսայ,
Իմ եարը քնած տեսայ,
Ձեռի սիպտակ քուլէքը,
Բոլորը մանած տեսայ:

4. Կարիր գուշը բուն ունի,
Եթում տղէն տուն ունի,
Ինձ նման սեւաբախտը
Աշխարհքումը ի՞նչ ունի:

## ԿՌՈՒՆԿ

**Andante.** (Ad libitum).




2. Թողեր եմ ու եկեր մլքերս ու այգիս,
Քանի որ ա՜խ կանեմ, կու քաղուի հոգիս։ (Կրկն.)
3. Կռո՛ւնկ, կանչէ՛, կանչէ՛, քանի գարուն է,
Ղարիպին սիրտը գունդ-գունդ արուն է։ (Կրկն.)
4. Աստուա՛ծ, քեզնէ խնդրեմ մուրվէթ ու քերեմ,
Ղարիպին սիրտն է խոց, ճիկերն է վէրէմ։ (Կրկն.)
5. Կերած հացն է լեղի ու ջուրը հարամ,
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս։
6. Գրեր եմ մէջ թղթիս, թէ հոս մնացի,
Օրիկ մը օրեր զաչերս չը բացի։ (Կրկն.)
7. Սիրելի՛ք, ձեզանէ կարօտ մնացի,
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞։
8. Աշունն է մօտեցեր, գնալու ես թէպտիր,
Երամ ես ժողվեր հազարներ ու բիւր։ (Կրկն.)
9. Ինձ պատասխան չտուիր, ելար, գնացիր,
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն, դէհ գնա՛, հեռացի՛ր։

## ՇՈՐՈՐԱ

Moderato.




2. Տողերն կայներ կարմնչին,
Մեանգիշ օղերն անղծին։

3. Խաբար արէք զօքնչին,
Մեռնեմ այդպէս կորչին։

## ԹԱԼԱՆՆ ԷԿԱՒ

Moderato.




2. Ալ քօղով խարսներ տարան,
Մրնք մացինք գիլու բերան,
Մըր եըժերն ու աղջըկներ,
Զընք գինա, թէ գո՞ր կորան։

3. Էլ չկայ օր ու արև,
Կտրաւ մըր անուշ բարև,
Աստուած զըմէն կու տեսնայ,
Նստուկ մըր գլխու վերև։

4. Զալում քրդեր մէկ եղած,
Զօրս կողերս են բոլըրած,
Զօռբութենով մըր տաւար,
Թալնեցին էղած-չեղած։

5. Խօրիմ չէխ Սօֆու գլուխ,
Օր չըկտրէր մըր տան մուխ,
Դիլաք կէնիմ Աստծուց,
Օր կտրի ուր օջղի ծուխ։




2. Լուսնակ, դու բանձրանց գնա,
Լոյս տուր ու բանձրանց գնա,
Հեռու տեղ մի եար ունիմ,
Բարև տուր անցի գնա: Ա՜խ, էնիմ...

3. Էս գիշեր, լուսնակ գիշեր,
Սև ունքեր, կարմիր թշեր,
Իմ սիրուն եարն ինձ ուէր,
Ձեզ խեր ու բարի գիշեր: Ա՜խ, էնիմ...

# ՀԱԲՐԲԱՆ




2. Հաբրբան, հաբրբան, հաբրբան, քեզ ղուրբան,
Հաբրբան, օյ, օյ, հաբրբան, օյ, օյ,
Սինամ սարեր, օյ, օյ։
Ջուրն առայ եկայ գալը,
Չ'տեսայ ֆիտան եարը,
Հաբրբան, օյ, օյ, հաբրբան, օյ, օյ,
Ֆիտան եարը ինձ տուէք,
Զր քաշեմ տն ու գալը։

3 Հաբրբան, հաբրբան, հաբրբան, քեզ ղուրբան,
Հաբրբան, օյ, օյ, հաբրբան, օյ օյ,
Սինամ սարեր, օյ, օյ։
Ջուրը մտել եմ խոր ա,
Բաթման շալվիկս նոր ա,
Հաբրբան, օյ, օյ, հաբրբան, օյ, օյ,
Խապար տարէք իմ նանին,
Դիւար-գլխար ես կորայ։

## ԱՐԱՔՍԻ ԵՐԳԸ




2. Ջուր եմ մնամ էլու ղռներ,
Էրթամ գանեմ դիմ խեղճ զառներ,
Սուքեմ դիմ բալլյա, ծառներ,
Զարթիր լաօ, մրռնիմ քրդի։
3. Դէն իրիշկէ գալող օրն է,
Քաջ Արաբօ բաղդաւորն է,
Կարմիր իրեցանց զինւորն է,
Զարթիր…
4. Խեղճ մշեցին մնայ լալով,
Հեռու երկրներ մուն գալով,
Մեռաւ թուրքի պարտքը տալով,
Զարթիր…
5. Ոտքի կայնի կորին խերան,
Զօրքով գնա առաջ ուրան,
Սալլաթ մէնրու բաժին խուրբան,
Զարթիր…
6. Սեֆիլ, շիւար մացած հայեր,
Էղած անտէր, բնաւեր հաւքեր,
Տէր, դու փրկէ, պահէ արթուն,
Զարթիր…

## ՈՐՍԿԱՆ ԱՂԲԷՐ




2. Դարդի ձեռքից սարերն ընկաւ,
Իմ մարալս, իմ բալէս,
Դլուխն առաւ քարերն ընկաւ, } Կրկն.
Իմ ջիւանս, իմ բալէս։ }

3. Տեսայ, քոյրի՛կ, Նախշուն բալէդ,
Կարմիր պսակ էր կապել,
Սիրած եարի համբոյրի տեղ՝ } Կրկն.
Կրծքին վարդեր էր ծաղկել։ }

4. Որսկան աղբէր, ասա, եարաբ
Ո՞վ է հարսը իմ բալիս,
Ո՞վ էր գրկում չոր գլուխը, } Կրկն.
Իմ ջահելիս, ջիւանիս։ }

5. Տեսայ, քոյրի՛կ, սիրած բալիդ,
Քարն էր դրել բարձի տեղ,
Անուշ քնով տաք գնդակն էր, } Կրկն.
Կրծքին սեղմել եարի տեղ։ }

6. Սարի մարմանդ հովն էր շփում,
Ճակտի փունջը մարալիդ,
Ծաղիկներն են վրան սգում, } Կրկն.
Աջիզ բալիդ, խեղճ լալիդ։ }




2. Քանի՛ դուրպաթ եմ ընկեր,
Մինչացս պոտին չեմ քաշեր,
Խարսնուկ անուշ, անթառամ
Քեզնից զատ կինն է հարամ։
Վայ լէ և այլն։

3. Հիմիկ լաճերս ի՞նչ կանեն,
Մեռա՞ն, կորա՞ն, ի՞նչքան են,
Սիրուն Շուշոն նէրոտիկ,
Կրրպօն, Մըրաօն խորօտիկ։
Վայ լէ և այլն։

4. Հիմիկ իմ արտ ինչ կեղնի,
Ընձնից մահրում կու գեղնի,
Սամքի ոէհան, նունու փար,
Գոմից պակսի մըր տաւար։
Վայ լէ և այլն։

5. Ա՜խ, շաշխա՞ւնեմ, ի՞նչ էրի,
Ղարիպ ընկայ սիրտս կէրի,
Տղայ ուսս կոց, ի՞նչ պէտք էրղ
Կիրամ, կիգամ իմ տղերք։
Վայ լէ և այլն։

# ԳՆԱՑ ԱՇՈՒՆ, ԵԿԱՒ ԳԵԱՐՈՒՆ




Soprano solo.
Allegretto. (ten. et sopr)
Allegro. (coro-tutti).

## ԱՂՕԹՔ

**Andantino.**




f
p
Ուր հայ ո բեար, որք— նին պան դուխտ,
Ո՞հ ընդ տար վայր բաղ — ձա կա րօտ
Ձու նին — պաշտ — պան, մերձ — ի — կո — րուստ,
Ի վտանգս կը — բեն հար — ուածս ան դութ:
Տո՛ւր — շունչ քոյղ — հայ որդ — ւոց հա մայն, —
Ի չիք դարձ ցին, վաշ ո սոխք չար,
և ի կրօն — սուրբ, հայք, հա յաս տան, կեց
ցեն յա ւերժ, կաց ցեն պայ — ծառ, կաց ցեն պայ ծառ:

## ՕՐՕՐՕՑԻ ԵՐԳ




2. Եկ, արեգաձագ, թո՛ղ արտ ու արօտ,
Օրօրէ՛ որդիս, քնի է կարօտ.
Բայց նա լալիս է. դու ձագուկ մի՛ դալ,
Իմ որդին չուզէ արեգալ դառնալ։

3. Թո՛ղ դու, տատրակիկ, քու ձագն ու բունը,
Վույվույով որդիս բե՛ր անուշ քունը.
Բայց նա լալիս է. տատրակիկ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սգաւոր դառնալ։

4. Կաչաղակ՝ ճարպիկ, գող, արծաթասէր,
Ճանճի գլուխով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաչաղակ մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սոխգագար դառնալ։

5. Թո՛ղ որսդ, արի՛, քաջասիրտ բազէ,
Քու երգը գուցէ իմ որդին կուզէ...
Բազէն որ եկաւ՝ որդիս լռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ։

## ՆՆՋԵՍ ՎԱՐԴԱՆ




2. Ննջեա՛, ննջեա՛, անուշ զաւակ,
Շուտ մեծացի՛ր և մարդ դառ,
Լե՛ր պիտանի հայրենիքիդ,
Հայրենիքիդ քո թշւառ։
3. Գիտե՞ս արդեօք, ո՞վ էր պապդ,
Եւ ինչ գործեր նա արաւ,
Նա Վարդանն էր, որ իւր գործով
Հայրենիքին փառք բերաւ։
4. Քո անունն է, նոյնպէս Վարդան,
Քաջ Վարդանին նմանի՛ր,
Նորա տւած օրինակով՝
Հայրենիքիդ ծառայիր։
5. Դէ՜հ, մեծացի՛ր ու քաջացիր,
Աղջիդ վրայ մտածիր,
Ձեռքէդ եկած ամէն բարիքն,
Նորա համար մի՛ խնայիր։

## ՀՈՎԻՈՒՀԻ




2. Իմ զարդս են այն ծաղիկները
Եւ հայելիս՝ պարզ վտակ,
Պատսպարանս՝ անտառները,
Լապտերս՝ վառ արեգակ։
3. Ազամանդս՝ ժայռ քարերը,
Եւ թանկ ոսկիս՝ անթառամ,
Մետաքսեներս՝ կանաչները՝
Փափուկ, մաքուր, պատուական։
4. Ես պարծենալ չեմ կարող, չեմ
Որ և իցէ ուսումով,
Միայն քաղցր երգել գիտեմ
Ու կեանք վարել սուրբ սրտով։

## ԴԱՐԲԻՆՆԵՐ


Andante.
Գի շերն ան ցաւ, լոյս ժա գե ցաւ,
Օ՛ն եր կա թաց շը ռինդ և պայտ,
աշ խա տու թեան ժամ է, որ դայք. ժամ է որ դայք
պաա կին օր ւանս այս աշ խա տանք, այս աշ խա տանք:
Allegro.
Օ՛ն այս եր կաթ ձե ծենք մենք, որ զուր տե ղը - ծեծ չու տենք,
Բայց բըռ նա ւորն էլ դը նայ, պա տեհ ա ռիթ մեզ մը նայ,
զար կենք կարգաւ տիկ տակ, տակ ծե ծենք, ծե ծենք տիկ, տակ, տակ:
գըր կենք գի բար և պա րենք, եր կաթ վեր չը կը ծե ծենք:
Օ՛ն գըր կենք մենք որ դայք, պա րենք, ան փոյթ, ան դա դար,
այս գե րու թեան դառն է կեանք, ան փո փոխ են և կա պանք,
գոհ սրր տով և զը ւարթ, որչ նենք զաս տւած մեր ար դար:
Օ՛ն, ցըն ծա ցէ՛ք, ձ՛ն խըռ դա ցէ՛ք, ձ՛ն պա րե ցէք - գուք ան դա դար:
Տրա լա, լա, տրա լա, լա, լա, լա, լա, լա, լա, լա, լա, լա, լա:

## ՈՒՍԱՆՈՂ

**Allegro - Moderato.**




2. Ով չի իլել ուսանող
Լաւ է, որ միշտ մնար հող,
Քանց Աստծոյ լոյս արեւն՝
Անասնոց պէս վայելէր։

3. Ով չի կռնձել երգելով,
Ընկերաց հետ պաչւելով,
Նա չը գիտէ ցնծութիւն,
Եղո՜ւկ սրտին, վա՜յ հոգուն։

4. Ով չի երգւել ընկերաց
Պաշտպան լինել հայրենեաց,
Վերջին արիւնը թափել,
Հայրենիքը ազատել։

5. Մեղնից էնպէսն հեռանայ,
Լոյս աշխարհից վերանայ.
Թող անասնոց կարգն ընկնի,
Թող մեր մէջ նա չի մնանի։

## ԱՌ ՍԻՐՈՒՀԻՆ

**Moderato.** (con amore).




2. Դիտես անգութ, որ պատանին
Զի դիմանար այս ցաւոյն,
Քեզի համար ալ չի դադրիր,
Աչքիս արցունքն օրն ի բուն։
3. Քեզի համար թափառական,
Ես սար ու ձոր ինկեր եմ.
Քեզի համար ոչնչացեր, .
Ոսկոր ու մորթ եղեր եմ։
4. Ալ բաւական է զիս խոցես,
Ահա ոտքդ ինկեր եմ.
Ըսէ՛ ինձի բառ մ'երջանիկ
Թէ՝ «Ես ալ քեզ կսիրեմ»։

# ԵՐԱԶ

**Andante.**




2. Կարկաչահոս աղբիւր այնտեղ,
Թաւալում էր մարգարիտ.—
Նա յստակ էր որպէս բիւրեղ, } Կրկն.
Այն երազ էր ցնորամիտ։
3. Եւ մեղեդին տխուր, մայրենի,
Յիշեց մանկութեան օրեր.—
Մօրս համբոյրն ես զգացի,— } Կրկն.
Ախ, ափսոս որ երազ էր։
4. Կրծքին սեղմեց կարօտագին.
Աչքերս սրբեց — շատ թաց էր,—
Բայց արտասուք դնում էին, } Կրկն.
Ա՜խ, այդ ինչո՞ւ երազ էր։

## ՀԱՅԵՐՈՒՍ ԲԱՂՁԱՆՔԸ




2. Երնէ՛կ, թէ, այս Նոր տարին
Ազատ շնչէր Հայաստան,
Եւ շուրջ Մասիս մեր սարին՝ } Կրկն.
Փայլէին անդ անդաստան։

3. Երնէ՛կ թէ, այս Նոր տարին
Ոսկի կանգնէր Հայաստան,
Եւ կիսաքանդ մեր Կարին՝ } Կրկն.
Լինէր քաղաք մեր ոստան։

4. Երնէ՛կ, թէ այս Նոր տարին
Հայ սրտի մէջ ուժ հոսէր,
Ապաւինած իւր սրբին, } Կրկն.
Հայը քիւրդէն չի սարսէր։

5. Երնէ՛կ, թէ այս Նոր տարին
Հայ ազգ 'ի մի գումարուէր,
'Ի գլուխ Կարնոյ հայ ամրին՝ } Կրկն.
Հայի դրօշակ ծածանէր։

6. Հայե՛ր, երբէք չերկմտինք,
Կըկատարուի այդ ամէն,—
Եթէ խոստում մենք հանենք } Կրկն.
Փոքրոգութիւն մեր սրտէն։

## ՊԱՐ ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐԱՑ




2. Ըզմարմին, միայն զայս մարմին
Կարես գերել, քեզ ի նախատ,
Սակայն ոգիք մեր երկնային
Սիրտք հայկազանց են միշտ ազատ։
3. Ազատ են, ազատ մեր լեզուք,
Մաղթել զշանթս արդարութեան
Ի գլուխ ձեր, ով արիւնարբուք,
Որ աւերէք զհայաստան։

## ԻՂՁ ՊԱՆԴԽՏԻՆ




2. Թէ դեռ չիմ արիւն չ'խառնուէր թոյն,
Դեռ երակացս մէջ աշխոյժ խաղային,
Ո՛հ քանի՛ հպարտ կանչէի ազատ
Թ'եկէք...

3. Թէ սէր ըլլայի կամ անմահ հոգի
Կ'կապէի հայոց սրտերն անմեկին,
Յայնժամ և նոքա մի որդիք հայկայ,
Կըլլանք 'ի մի անշուշտ, մէկ սիրտ,
մէկ մարմին
Սիրեմք ընկեր զընկեր սիրեմք կաթողին:

# ԵԿԱՒ ԺԱՄԱՆԱԿ



## ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՑ ԵՐԳԸ




2. Մեր հայրենիք շղթաներով,
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով՝
Պիտի լինի ազատուած։

3. «Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի։

4. Ահա՛ իմ գործ, ահա դրօշ,
Տուր ձի հեծիր, քաջի պէս,
Գնա՛ փրկել մեր հայրենիք—
Պատերազմի վառ հանդէս»։

5. Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտի մեռնէ,
Բայց երանի՜, որ իւր ազգի՝
Ազատութեան կը զոհուի։

# ՅԱՌԱՋ



## ԿԱՐՆՈՑ ՍՈԽԱՆ

**Moderato.**



**Allegretto.**



2. Նորա տունն է քանդած,
Զաւակունք կոտորած,
Արտօրա՛ և այլն։

3. Կարին կը հառաչէ,
«Օգնեցէ՛ք», կը կանչէ.—
Արտօրա՛ և այլն։

4. Տասր հազար այնալու,
Կրբնայ ինձ փրրկելու.
Արտօրա՛ և այլն։

5. Մի օր շատ կը ցաւիք,
Որ օգնել չուզացիք.
Արտօրա՛ և այլն։

6. Դէպ Կարին, հայ եղբայր,
Մինչ կորած չէ իսպառ.
Արտօրանք դէպ Կարին,
Ազատել հայերին։

## ԿԵՑՑԷ ՃԱՊՈՒՀ

**Allegro.** (tempo di marcia).



# ԶԱՐԹԻՐ ՍԻՐՏ ԻՄ

**Allegro** (con entusiasmo.)




2. Ուրախութեան օր է այս,
Բերկրին սրտեր դեռահաս;
Պարք մուզայից և այլն.

## ՅՈՅՍ




2. Թուխպը թող պատէ երկինքը պայծառ,
Թանձր մառախուղ երկիր թող փակէ,
Տարերք աշխարհիս խառնուին իրար,
Յուսով եմ, վաղ-ուշ, արև պիտ ծագէ։

3. Թող գայ փորձութիւն, թող գայ
հալածանք,
Խաւար թող դառնայ անաղօտ լոյսը,
Սարսափելի չեն հային տառապանք—
Միայն․ ․ ․ չի հատնէր խղճուկի յոյսը։

# ՈՎ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ




2. Առէք սուսեր, նետ ու աղեղ,
Ելէք ընդդէմ ձեր թշնամեաց
Ձեր հաւատը և ձեր ազգը,
Պահպանեցէք յոտար ազգաց։
Հայ զինուորի կեանքը դառն է,
Երբ նա պարապ տանն է նստած.
Մեզ ասպարէզ անմահ փառաց
Կռւի դաշտն է նշանակած։

3 Հայոց հովիւք, ձեր ոչխարներ
Է՞ր սար ու ձոր թափառական
Գազանաց ճանկ ընկած ողբան,
Է՞ր չըլսէք նոցա կական։
Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք,
Աւետարան, խաչն 'ի ձեռին,
Առաջնորդել հայոց զօրքին
'Ի ժամ սրբոյ պատերազմին։




2. Ինչո՞վ են նրանք մեզ տիրելու արժանի
Նրանք մարդ չեն այլ լեռնական վայրենի.
Երկն է յիրքը, մերն է ուսում ու
հանճար,
Մերն է հողը, մենք ենք նորա տէրն
արդար.
Հերիք եղնենք . . .
3. Մենք եղբայրներ ունինք հեռու
տեղերում,
Նոքա մեր վրայ լաիկ արցունք են
թափում,
Չեն խնայիլ Թև ու Թիկունք կը հասնին
Շուտով կգան, կմիանան սուրբ գործին:
Հերիք եղնենք . .

## ԶԻՆԻՈՐԻ ԵՐԳԸ

**Allegro-Moderato** (staccato.)



2. Պարզ արև երկնքում մեզ վրայ է խնդում,
Ինչո՞ւ մեր ազգութիւն սիրեց միութիւն.
Քայլ մ'առաջ և այլն։

## ԶԷՅԹՈՒՆՑԻՆԵՐ

**Allegro.** (tempo di marcia).




2. Զէյթունցիներ, մեր գըօսանք
Է պատերազմ և արշաւանք,
Սուր, թուր, գնդակ և հրացան } Կրկն.
Մեր խաղալիքն է յաւիտեան:

3. Կեցցէ Զէյթուն, ապրէ Զէյթուն,
Թող չտեսնէ բարկութիւն,
Քանի ունի մեզ պէս որդիք, } Կրկն.
Ապրէ Զէյթուն, կեցցէ Զէյթուն:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

**Allegro** (tempo di marcia).




2. Ձեռն'ի ձեռին տուէք գնանք պատերազմ,
Վանենք թշնամեաց, ջնջենք մեր երկրից,
Հայ անուան համար լինենք մենք միշտ
կազմ,
Մեռնել քաջաբար, չընկնել վատաբար։

3. Արտաշէս արքայն փառօք պանծացած,
Մեզ է առաջնորդ, դէն ձգենք երկիւղ,
Հայաստան կանչենք կրծքներս դէմ
դրած,
Բառնամք մեր երկրից տխրած մա-
ռախուղ։

4. Ուրեմն կեցցէ տուն քաջ Արտաշէսին,
Որ նա վանեց քաջ ալանաց ազգին,
Ազատեց երկիրը օտար ցեղերից,
Պանծնեց անմահ արժան մեր առաջին։

# ՀԻՄԻ ԷԼ ԽՕՍԵՆՔ




2. Հիմի՞ էլ խօսենք, երբ օտարից շատ
Մենք ենք մեր ազգի արիւնը խմում,
Մոխրատեղով լցրինք Դւին, Արտաշատ,
Ծխի մէջ կորաւ խաչն եկեղեցուն,
Երբ այս ամէնը մենք կատարել ենք։
Հիմի՞ էլ…

3. Հիմի՞ էլ խօսենք, երբ Լուսաւորչի
Բնիկ ժառանգի թեւերը կտրած,
Անարգ պարսիկը՝ այս ու այն թեմի
Կարգում է տեսուչ, ըստ իւր չար մտաց
Եւ մենք դեռ, կեցցէ արքին, գոռում
ենք։ Հիմի՞ էլ…

4. Հիմի՞ էլ խօսենք, երբ ձեռք ենք տալիս,
Երբ ողջունում ենք մենք այդ չքերին,
Որ դրան շուն են, և մեզ տեսնելիս
Շատ դիմակները դնում երեսին,
Այդպիսիներին դարձեալ պատւում
ենք։ Հիմի՞ էլ…

5. Էլ մեր երեսին մնա՞ց մի կաթիլ
Ամօթի սուրբ ջուր, որ բերան բանանք.
Ոչ, թէ չենք ուզում հողէց հող կորչել,
Թշնամու արիւնով մեր թրին ջուր
տանք,
Այդ, եկեղեցի փրկենք, ազատենք,
ապա թէ խօսենք։

## ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ




2. Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած
Սըգաւոր ես ինձ նման։

3. Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սէգ, հըպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

4. Մշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջրին,
Ծըկուն ոստն ու տերև
Թող լթաց անեն տապ օրին։

5. Խիզա՜խ, անմի՛տ պատանի,
Նիրհըս ինչո՞ւ դարևոր
Վրդովում ես, նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր։

6. Սիրելիի մահից յետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտքից գլուխ պճնուի
Իր զարդերով թանկագին։

7. Կար ժամանակ, որ ես էլ
Շքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պըչրանքով
Փախչում էի ափերէս։

8. Ի՞նչս մնաց էն օրից,
Ո՞ր ջրամօտ գեղերս,
Ո՞րը իմ շէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերս։

9. Էլ չի խօսեց Արաքսը,
Յորձանք տուեց ահագին,
Օղակ, օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին։

## ԹՈՂ ՉԵՐԳԷ ԲԼԲՈՒԼ

**Moderato** (con afflizione.)




2. Մշոյ դաշտերը արիւնով ներկւած,
Հայոց սրտերը վշտով են պատած.
Սասնոյ լեռները լի են դիերով.
Մշոյ դաշտերը ներկւած արիւնովː

3. Էլ ինչո՞ւ ծաղկի քաղցրահոտ շուշան,
Հայոց եղեմի դրախտում անմահ,
Քանի հայ աղջիկ չէ զարդարելու
Չքնաղ իւր կուրծքը շքեղ պճնելու.

## ԼՈՒՑ



# ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆԸ ՔԱՆԴԵՑ ՄԵՐ ՏՈՒՆԸ

Allegro.




2. Գիտեմ առաջուց պառաւ կնոջ պէս
Կը լաս, կը ողբաս, արցունք կը թափես,
Անաստուած քրդից չունինք մենք դադար
Քերթում հայերիս, քերթում անդադար։
Պանդխտութիւնը և այլն։

3. Նա անաստուած չէ. դու ես անաստուած.
Ակն ընդ ական, մի՞թէ չես լսած.
Վեր առ դու ես վահան ու նիզակ,
Փշրիր ատամը. ակըն ընդ ական։
Պանդխտութիւնը և այլն

## ԵՐԳ ՑԱՅԳԻՆ




2. Դարեր անցան, լուր մը չ'առի,
Իմ քաջերս մեռան, կորան,
Կ'ուլամ, արիւնս կըսառի,
Մէկը չունիմ, տայ ինձ դարման։
Եկայք և այլն։

3. Արիւնս ցամքած, սիրտս մաշած,
Դէմքս է տխուր մինչ յաւիտեան.
Եւ կարօտոյն իմ որդեկաց,
Պիտի իջնեմ սև գերեզման։
Եկայք և այլն։

4. Եւ դու, հովիւ Թափառական,
Կ'երգես տխուր 'ի մէջ հովտաց,
Ե՛կ, արտասուենք Թանգ կորստեան,
Տխուր մահուան մեր որդեկաց։
Եկայք և այլն։

5. Իսկ դու, կռունկ իմ հայրենեաց,
Գնա՛ հեռու աչքէս 'ի բաց,
Ցեւրին ողջոյնս տա՛ր զաւակացս,
Չի կեանքիս մէջ՝ յոյսս է մեռած։
Եկայք և այլն։

# ՄԱՀ ՔԱՋՈՐԴԻՈՅՆ




2. Ինչպէս երբեմն օրրանիս մէջ,
Կակուղ ձեռքով փայփայելով՝
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր,
Իբրև հրեշտակ նըւագելով,
Զիս հանգչեցու 'ի հող՝ և դուն
Ուրախ...

3. «Նորեկ որդւոյս կենացն արև,
Ձեզի համար փայլի՜ Հայեր».
Այսպէս յայնժամ դու կ'երգէիր
Օրօրոցիս նստեալ քովեր։
Անոնց համար շիջաւ և դուն
Ուրախ...

4. Կարմիր կայլակք ցայտին վէրքէս,
Սակայն ժայր իմ նայէ' չորս դին,
Զարիւնըռուշտ ոսոխքն տե՛ս
Հազարներով փռւած գետին,
Կերաւ զանոնք սուր մեր, ու դուն
Ուրախ...

5. Մռնչեցին ինչպէս վիշապ,
Ու մեր վրայ յարձակեցան,
Ո՜վ Հայրենիք 'ի հուր, 'ի բոց,
Քո համար մեր սիրտք վառեցան,
Կարմիր ներկան ձորք մեր, ու դուն
Ուրախ...

6. Ու ժամ զարկին մեր հարց ոսկերք,
Զի չէ մեռած Հայոց կրակ,
Ու ցնծացին այնչափ զոհեր
Զի լուծաւ վրէժ յարեան վտակ.
Խնտաց Մասիս, մայր իմ, և դուն
Ուրախ...

7. Վերջի՜ն համբոյր տամ քեզ մայրիկ,
Հաստուցանես զայն սիրուհւոյս.
Վերջին անգամ գրկեմ մեր հող
Ուր արդ կ'իջնամ 'ի ծոցն անլոյս,
Խաչ մը տնկէ վրաս, ու դուն
Ուրախ...

# ԹԱՂՈՒՄՆ ՔԱՋՈՐԴՈՑՆ

Andantino.




Ու չերգեցինք ողբոց երգեր սրտայոյզ,
ոհ, սրտայոյզ,
Երբ պատանւոյն բացինք մռայլ փոսին
դուռ, ոհ, փոսին դուռ:

2. Գիշերական մունջ ըստուէրներ շուրջ
կային
Երբ հրացանի կոթով ըղձող փորեցինք,
Լուսին միայն դողդոջ շողայր մեր
գլխին,
Սուգ էր պատեր ըզդաշտ բլուր և
երկինք:

3. Պէտք չէր դագաղ և ոչ ճերմակ պա-
տանքներ,
Որով գոցուէր ազատորդի քաջորդին,
Նա յետ մարտին կարծես յոգնած կու
հանգչէր
Ու վէրարկուն կարմիր բաւ էր իւր
անձին:

4. Անձայն ու կարճ ննջեցելոց մի զրուցեց
Մեր քաջ Տէրտէրն, զինւոր Հայոց
և՛ Աստուծոյ,
Գովեց զմահն և զքաջութիւնն իւր
օրհնեց,
Թո՛յլ չի տուաւ հառաչ մ'ու ճիչ հա-
նելոյ:

5. Մէյ մ'ալ քամի յանկարծ փչեց ցըր-
տաշունչ,
Լուսնին շողերն եկաւ գոցեց մթին ամպ
Ու մեր սարերն գերթ ուրուականք
անմռունչ,
Սև գլուխնին տնկած դիտեն ապշու-
թեամբ:

6. Ցայնժամ ցուրտ-ցուրտ հող լեցուցինք
իւր վրան.
Խաչ մը դրինք, ինչպէս իւր մօր պատ-
ուէր էր.
Ո՛չ այլ շքեղ արձանագիր, ո՛չ տապան,
Զինքըն միայն թողուցինք իւր փառ-
քին հետ:

# ԲԼԲՈՒԼ




2. Տանջված սիրտը, անուշ երգից
Քրքրում է, խորանում,
Սրտի վիշտը, քո երգերից՝
Փրփրում է, լեռնանում։
3. Գնա՛, բլբուլ, մեր աշխարհից,
Գնա՛ երգիր այլ երկրում.
Ասա՛ այնտեղ, որ մեր վարդից՝
Արեան թարմ հոտ է բուրում։
4. Որ ողբաձայն մրմնջացող
Վտակների հոսանքին՝
Մխանում են արեան շիթեր,
Առաջ շարժւում մոլեգին։
5. Որ ծաղկազարդ հովիտներից
Մահւան ցուրտ հոտ է փչում,
Որ մեր երկրում կանաչ դաշտերն
Իսկոյն կարմիր են ներկւում։
6. Գնա՛ պատմիր, որ դու տեսար
Այրիացած մի երկիր,
Սարեր, ձորեր կարմիր հագած,
Արիւնաղարդ մեր երկիր։
7. Ա՜խ, ջան բլբուլ, էլ մի՛ կանգնիր,
Գնա՛, պատմիր աշխարհին,
Մեր ցաւն ու հոգսն, վիշտն ու թախիծ,
Մեր օրերը դառնագին։

## ՏԽՈՒՐ ԵՐԳ




2. Այնտեղ անբաղդ, թշուառ մայրեր,
Որդեկորոյս ծնողներ,
Եղբայրազուրկ անթիւ քոյրեր, } կրկն.
Թափում են յորդ արցունքներ։ }

## ՄԱՏԱՂ ԿԵԱՆՔՍ




2. Բանտի կտուրը ծածկուած էր քարով ու
կրով, վայ քարով ու կրով,
Լուսամուտներ նեղ ու շարան ցցերով,
Փակուած դռներով, խոնաւ յատակով,
Փակուած դռներով, խոնաւ յատակով,
հաստ, հաստ ցցերով։

## ՀԱՅՈՑ ԳԱՆԳԱՏԸ




2. Աստուած, սրտով որ բարի ես,
Մենք վար, դու վեր, շատ հեռի ես,
Այժմ ալ, խոշոր գործերի ես,
Ապա որի՞ն մենք գանգատինք։
3. Ցոյնը մեզի ասլը կ՚ատէ,
Նեմցէն մեզնէ կրօնքով զատ է,
Ֆրանկի բանը կասեն վատ է,
Ապա որի՞ն...
4. Թուրքին միտքը դէպի Պալքան,
Իսպառ մոռցաւ նա Հայաստան,
Նրան պէտք է լոկ մեր փարան,
Ապա որի՞ն...
5. Մեր տեղը քաջ կտրիճներ կան
Պէտք որ եղաւ՝ ստակ ալ կուգայ,
Մենակ ճամբայ ցուցնող չկայ։
Ապա որի՞ն...
6. Հայի՛ դաշտեր, արեա՛ն դաշտեր.
Շատ կուլ տուիք Հայի քաջեր,
Թէ որ ձեզնէ մէկը ելնէր,
Մեր գանգատին վերջ կը դնէր։

## ԱՂԱՍՈՒ ԵՐԳԸ

**Andante.** (Ad libitum).







2. Ամպերն առաջիս, սարերն ետեւիս,
Քեզ մտիկ տալով, ա՜յ իմ բարձր Մասիս,
Աղի արցունքով, էրւած-խորովւած,
Երեսիդ նայեմ մնամ քարացած:

3. Նազլու իմ Նազլու, աննման Նազլու,
Սիրտս խորովի անունդ յիշելով.
Նազլու իմ Նազլու, հրաշալի Նազլու,
Աղասին քեզ տայ իր յետին բարով:

4. Սարերի դօշին, ձորերի միջին,
Վա՜յ գլխին տալով քու խեղճ Աղասին,
Երեսիցդ զրկւած, քո սիրով մաշւած,
Տատրակի նման փշի վրայ նստած:

5. Քեզ եմ մնում, քեզ, քու ջանին մեռնեմ,
Հող ու գերեզման ես վրէս ունեմ
Քանց իմ սառ մարմին, էլ ի՞նչ գերեզման
Ինձի պէտք կու գայ, երեսիդ ղուրբան:

# ՀԱՅ ՄԱՅՐԵՐԻՆ




2. Ոչ հոգեբուղխ սուրբ աղօթքը
Օրհնեց անթաղ դիակներ,
Ոչ մայրական դողդոջ ձեռքը
Փակեց անկեանք, սառն աչեր.
Միայն երկինք—խաւար երկինք
Արեամբ ներկուած աշխարհի,
Տեսաւ բարձրից օրհնեց լռիկ,
Վերջին շունչը քաջերի։

3. Բայց դուք մի՛ լաք, ո՜վ հայ մայրեր,
Ձեր սնուցած քաջ որդիք
Չէին սիրում արտասուքներ,
Երբ բազմատանջ հայրենիք
Ազատութեան ջերմ փափագով
Ազգից խնդրեց ողջակէզ,
Նոքա անյաց, վառուած հոգով,
Վերջին համբոյր տուին ձեզ։

4. Վերջին համբոյր… և սլացան
Դէպի լեռներ արնաներկ,
Մատաղ ձեռքին սուր, հրացան,
Վարդ շրթունքին՝ ազատ երգ.
Մի՛ լաք մայրեր, դուք երջանիկ,
Եւ անմահ էք, որ ազգին
Պարգևեցիք հերոս որդիք,
Փառք չի հասնիլ ձեր փառքին

## ՆՊԱՏԱԿԻՍ ԳԷԹ ՄԻ ՄԱՍԸ



# ՎԱՆԵՑԻ ԿՏՐԻՃ (Նուէր Մուշեղին)




2. Տուէք ինձ սարեր՝ սարեր կործանեմ
Ծառն արմատով գետինէն հանեմ,
Սուր ակռաներովս երկաթ կը ծամեմ.
Մէջս այդքան ոյժ, ասէ՛ք, ի՞նչ անեմ։
3. Առջեւս դրէք մարդ հարիւր ու հազար
Ջարդեմ, տորոփեմ, գերթ քողկ ու գա-
զար,
Ինչ այլք շարժմու մէջ՝ այն ես օր կա-
նեմ…
Մէջս այդքան ոյժ, ասէ՛ք, ի՞նչ անեմ։
4. Իմ պէս բիւրերով՝ լի է Հայաստան,
— Նրա սուրբ հողին ընեմ ես զուր-
բան —
Մարմինը ուժեղ ու առողջ է Հային,
Այլ, ափսո՜ս, թմրած է նորա հոգին։
5. Թէ մի օր զարթի նորա մեծ հոգին,
Նա պարզ կը ցուցնէ Օսմանլի ազգին,
Ո՞վ էր երկուսէն տարուկ և կամ տէր,
Ա՜խ, ե՞րբ պիտ՝ թնդաք, խեղճ Հայի
սրտեր։

# ԱԶԳԱՅԻՆ ՕՐՀՆԵՐԳ




2. Ո՛վ Տէր մեր, Տէր, փութա-
Աջդ մեր համայն փրկեա՛
ի թշնամեաց։ Զողորմութիւն...

3. Ի քո լիշեալ տեղի
Զաթոռ Հայրապետի
Մեր հաստատեա՛։
Զերկարութիւն կենաց
Հօր մեր սատւածապղեաց
Շնորհեա՛ պետին մեր հարց,
Որ զմեզ հովուէ։

## ԽԱՂԱՂ ԳԱՃՏԻ ՈՐԴԻՔ

**Allegro.**



## ՍԱՍՈՒՆՑՈՑ ԲԱՅԼԵՐԳ

Allegro. (con solennita).



2. Մանուկ, Նորածին աչքերս փակած,
Խաղում են, մայրիկ, բազուկներս բաց.
Չեմ ուզում հանգիստ ես օրօրոցի,
Երբ իմ եղբայրքս են մէջ լաց ու կոծի։
Կեցցէ՛ք և այլն։

## ԿԱՐԿՈՒՏ ՏԵՂԱՑ




2. Մի ժամւայ մէջ Մարգիկ ցեղը ջընջ-
ւեցաւ,
Խանասորայ կանաչ դաշտը, կարմիր
արեամբ ներկւեցաւ: (Կրկն.)
3. Եաման, Աստուած, ֆիդան եկաւ, ուր
փախչենք,
Ասաց որդուն, կրծքին սեղմած, լեղա-
պատառ քրդուհին: (Կրկն.)
4. Մի՛ վախենար, հանգիստ կացիր, բա-
ջի ջան,
Կանանց երբէք ձեռք տալու չէ, վրէժ-
խնդիր քաջ ֆիդան։(Կրկն.)
5. Օրը մթնեց, հաւաքւեցան բանակը,
Քսան հոգի զոհ գնացին անհաւասար
կռւումը։ (Կրկն.)
6. Չկայ Կարօն, տխուր պատեց ամենքին,
Երանի էր նորա հոգուն, հերոսացաւ
կռւի մէջ։ (Կրկն.)
7. Քեզ ենք յանձնում, ով պաշտելի Ա-
րաբօ,
Մեր դրօշը ամուր պահիր, քո կըրծ-
քումը խնկելի։ (Կրկն.)
8. Հայե՛ր, յիշէք նւիրական այս օրը,
Յուլիս ամսի քսան-հինգին կատարեցէք
մեծ տօնը։ (Կրկն.)

## ԿՌՒԵՑԷՔ ՏՂԵՐՔ




2. Ահա բրգերը փախչին սարսափած,
Ահա դիակներ արեամբ շաղախուած,
Կրա՜կ տեղացէք, անդադար կրակ,
Փառք մեր զէնքերին, առատ է գնդակ։
Այս անգամ և այլն։

3. Մեռնենք յուսալով, մերն է ապագան,
Մեռնենք, բայց կեցցէ, կեցցէ հայրենիք,
Այսպէս յորդորեց և ընկաւ արին,
Թողնելով մեզնում յիշատակ բարի։
Այս անգամ և այլն։

## ԿՈՎԿԱՍԻ ՔԱՋԵՐ

**Allegro.** (con anima).




2. Դէ՛հ, հայ ընկերներ, հեծէ՛ք ձեր ձիեր,
Բաց թողէ՛ք սանձեր, անցէ՛ք սար ու ձոր.
Ահա՛ կռուի դաշտ, թշնամին անհաշտ.
Մեր սուր ու գնդակ սպանաչ դէպ քրդեր։
Սուլթան և այլն։

# ԽԱՆԻ ԵՐԳԸ




2. Կեցցէ՛ Խանը իր խմբովը,
Սարսափ թողեց Բասէնումը,
Երեք օր ու գիշեր կռուեց,
Աչքերից կտրեց քունը։

3. Հայրենիքի հողի վերայ՝
Քաջը թափեց իւր արիւնը.
Մինայ, յիշէ՛, չ'մոռանաս,
Կարիճ Խանի քաջ անունը։

# ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԸ

**Allegro.**




2. Խմբապետները, հոգւով են լցւած,
Ֆիդայի ուժով՝ գնում են առաջ,
Առաջն է կանգնած Անդրանիկը քաջ,
Գոռում է գոչում, կուզէ պատերազմ։

## ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԿՌՈՒԵՆՔ

Allegro.




2. Մոլի և վախկոտ տանիկը թող լայ,
Երբ հայ քաջի դէմ կուլի դուրս կուգայ,
Մենք վախեցող չենք տանջանքից, մահից,
Եւ ոչ էլ Թուրքի անարգ գնդակից։

3. Ամօթ այն հօրը, չէ մղում որդուն
Կռուի լայն դաշտում թափելու արիւն,
Ամօթ այն հային, և բիւր նախատինք,
Որ ազգի սիրուն չի գործում բարիք։

## ՍԵՐՈԲԻ ԿՈՉԸ



2. Երկաթէ մարդ, քարէ հոգի,
Վրէժխնդիր լինի Թուրքին,
Աշխուժով քարի տակ չողող,
Անախալ խփողը Թող գայ:

3. Մերթ Սասուն, մերթ սար 'ի Սիփան
Կռուներ ունենք անխափան,
Մինչև որ փրկենք հայրենիք,
Այս յոյս ունեցողը Թող գայ:

4. Սուրը մէջքին, հրացան ուսին,
Համարձակ գիմէ օրհասին,
Մահուան պատուհերը միասին;
Մահն արհամարհողը Թող գայ:

## ՆՊԱՏԱԿԻՍ ՀԱՍՆԵՄ ՄԻԱՅՆ

**Moderato.**



2. Ա՜խ, Հայաստան, սիրտս ու հոգիս
Քեզ նուիրեմ, ընդունիր,
Կարելի է մեռնել շուտով,
Ա՜խ, Հայաստան, ոտքի ելնես։

3. Ես քո սիրուն բանան այլ մանեմ,
Պատրաստ է այն իմ համար,
Սուրս ու ձեռքս շղթայակապ,
Երջանկութիւն է ինձ համար։

# ՀՆՁԵՍՅԵՆ ԼԱՐՔ




Allegro (con vivacita).
p
pp
Moderato (con entusiasmo).
1.
2.

# Ց Ա Ն Կ


| | Երես |
|---|---|
| Աղօթք: Մ. Փ. | 3 |
| Աղբէր ջան | — |
| Եղսօ ջան. | 4 |
| Դարդըս լացէք: Ա. Իսահակեան. | — |
| Խնկի ծառ | 5 |
| Շողեր ջան | — |
| Ջան ինան. | 6 |
| Արմիկի երգ: Ղ. Աղայեան. | — |
| Անբաժիններ: Ա. Իսահակ. | 7 |
| Ալ մինթանէդ | — |
| Ծամբայ տուէք. | 8 |
| Ջան գիւլում. | — |
| Աշուղական երգ: Մանուքի Գէորգ. | 9 |
| Ջան, մարալ | — |
| Գիշերը Վանում: Ա. Սափարեան. | 10 |
| Կապուտակ ձին. | — |
| Մաշկոց մոտայ: բան. և եղ. Յար. Թում. | 11 |
| Քրդուհու երգը. «Կայծեր» | — |
| Սարէն կուգայ. | 12 |
| Շէխ Սաֆօ. | 13 |
| Գութանի երգ: Յով. Թումանեան. | 14 |
| Ես ճամբէքը | 15 |
| Վայ լէլէ | — |
| Սար ջան. | 16 |
| Քոյրերիս մէջ: Ջիւանի. | — |
| Հարբրան. | 17 |
| Օրան գեաւուր | — |
| Խանում Նէա ջան. | 18 |
| Արարանը քարոտ ա. | 19 |
| Լուսնակը ցոլաց. | 20 |
| Ամօթ, հապար ամօթ | 21 |
| Երգ Վանի լեզուով. | 22 |
| Արազ: Յ. Յովհաննիսեան. | 23 |
| Հարբրան. | 24 |
| Հոյ Նազանե. | 25 |
| Լաց մէրիկ ջան: Ա. Ի. | 26 |
| Սոխակ ինչո՞ւ. | 27 |
| Վարդ կօշիկս. | 28 |
| Հայ ապրինք: Խ. Ե. Գալֆ. | 29 |
| Արազը հեշտացել ա | — |
| Զոյգ, զոյգ կռունկ | 30 |
| Էկաւ գեարուն. | — |
| Մաճկալ: Ա. Ի. | 31 |
| Աղբիւր: Ղ. Ա. | 32 |
| Ա՜յ, մարալ աղջիկ. | 33 |
| Հարբրան. | — |
| Կռունկ. | 34 |
| Շօրօրա. | 35 |
| Թալանն էկաւ | — |
| Սարերի հովին. | 36 |
| Հարբրան | 37 |
| Արազոյի երգը | 38 |
| Որսկան ախպեր | 39 |
| Մըր խօր | 40 |
| Գրնաց աշուն | 41 |
| Աղօթք: Վ. Վ. Մանկունի. | 43 |
| Օրօրոցի երգ: Ռ. Պատկանեան. | 45 |
| Ննջեա Վարդան: Կ. Մամիկոնեան. | 46 |
| Հովուհի | 47 |
| Դարբիններ | 43 |
| Ուսանող: Ռ. Պ. | 49 |
| Առ սիրուհին. | 50 |
| Երազ: Ս. Շահազիզ. | 51 |
| Նոր տարի: Ռ. Պ. | 52 |
| Պար հայ նախարարաց: Խ. Ե. Գալֆ. | 53 |
| Իղձ Պանդխտին. | 54 |
| Եկաւ ժամանակ: Ս. Հ. Ֆէլէկեան. | 55 |
| Իտալացի աղջկայ երգը: Մ. Նալբանդ. | 56 |
| Յառաջ: Ղ. Վ. Ալիշան. | 57 |
| Կարնոյ սոխակ: Ռ. Պ. | 58 |
| Կեցցէ Տապուհ. | — |
| Զարթիր սիրտ իմ. | 59 |
| Ցոյս: Ռ. Պ. եղ. Մ. Տալամեանի. | 60 |
| Ով հայկազունք: Յ. Կարինեան. | 61 |
| Վանեցոց խրախոյս: Մնացեան. | 62 |
| Զինուորի երգ | 63 |
| Զէյթունցիներ | 64 |
| Հայկական քայլերգ | 65 |
| Հիմի էլ խօսենք: Մ. Ն. | 66 |
| Արաքսի արտասուքը: Ռ. Պ. | 67 |
| Թող չերգէ բլբուլ | 68 |
| Լռեց: Ռ. Պ. եղ. Մ. Տ. | 69 |
| Պանդխտութիւնը քանդեց | 70 |
| Երգ յաւաղին | 71 |
| Մահ քաջորդւոյն: Մ. Պէշիկթաշլեան | 72 |
| Թաղումն քաջորդւոյն: Մ. Պ. | 73 |
| Բլբուլ: Միրզայր: | 74 |
| Տխուր երգ. | 75 |
| Մասաց կեանքը. | — |
| Հայի զանգատը: Ռ. Պ. | 76 |
| Ազատու երգը: Խ. Աբովեան. | 77 |
| Հայ մայրերին: Ա. Ծատուրեան. | 78 |
| Նրպատակիս զէթ մի մասը | 79 |
| Վանեցի կարիչ: Ռ. Պ. եղ. Մինաս. | 80 |
| Ազգային Օրհներգ: Մ. Թաղիադեան. | 81 |
| Խաղաղ գաշտի որդիք | 82 |
| Սասունցոց քայլերգ | 83 |
| Կարկուտ տեղաց | 84 |
| Կռուեցէ՛ք տղերք | 85 |
| Կովկասի քաջեր | 86 |
| Խանի երգը: Մինաս | 87 |
| Հայզունի երգը | 88 |
| Մենք պէտք է կռուենք | 89 |
| Սեւրոքի կոչը | 90 |
| Նպատակիս | 91 |
| Հրնչեցեն լարք | 92 |